

Բ. Ա. ԲՈԽՈՎՈՅԵ

10-րդ դարի ՎՐԱՑԵՐԵՆ ՄԻ ԶԵՌԱԳՐԻ ՀԱՅԵՐԵՆ  
ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

10-րդ դարից մեջ են հասել մի շաբք վրացերեն ձեռագրեր: Այդ ձեռագրերի մի մասը ընդօրինակվել է բուն Վրաստանում, իսկ մյուս մասը՝ Պաղեստինի, Սինայի և Աթոս լեռան վրաց մենաստաններում: Հատկապես մեծ թվով ձեռագրեր են պահպանվել Վրաստանի Տառ և Կլարչեթի գավառներից, որոնցից մի քանիսի դրամական թվականները հայտնի են, իսկ մնացածներինը որոշվում են հնագրական կամ այլ լրացուցիչ տվյալների հիման վրա: Վերջիններիս թվին է պատկանում այն ձեռագիրը, որը մեր աշխատության համար հետաքրքրիր նյութ է պարունակում:

Մեր ուսումնասիրության համար անհրաժեշտ նյութ ընձեռող ձեռագիրը իրենից ներկայացնում է օրհներգերի ժողովածու, այսպիս կոչված «օձօջան» — յատկար», կազմված վրաց օրիգինալ և թարգմանական երգերից վրաց հայտնի օրհներգագիր Միքայել Մողեկիլու կողմից: Միքայելի սույն ժողովածուն (Տ-425) բազկացած է 544 մադաղաթյա մեծաղիր ( $35,5 \times 30,5$  սմ) էջերից<sup>1</sup>: Ձեռագրում պահպանված հիշատակարանների մեջ Տառ-Կլարչեթում գործող պատմական անձնավորությունների հիշատակությունը հնարավորություն է տալիս ձեռագիրը ընդօրինակած համարել 978—988 թվականներին<sup>2</sup>: Տառ-Կլարչեթում գրված այս հուշարձանը, 10-րդ դարի մյուս ձեռագրերի նման, որոնք, սակայն, իրենց բովանդակությամբ զիշում են Միքայելի ձեռագրին, ի միշտ այլոց մեծ արժեք է ներկայացնում նաև այն պատճառով, որ նրա մեջ ընդօրինակված օրհներգերի ճնշող մասը գրված է նեմային նշաններով, այսինքն երաժշտական խաղերով, որոնց վերծանումը, չնայած մինչև այժմ կատարված փորձերին, դեռևս չի հաջողվել<sup>3</sup>:

Ժողովածուի տարրեր էջերում, օրհներգերի տների վերջում, երբ վերջին բարից հետո բավական ազատ տեղ է մնացել, տեղ-տեղ, բնագրի որշի ձեռքով դրվել են հայերեն առանձին բառեր կամ ֆրազներ: Հայերեն գրությունների թիվը 29 է, դրանք գրված են կարմիր ու սև թանաքով՝ բոլորագիր երկաթագրով, բացի մեկից, որը դուռ բոլորագիր է: Ահա դրանց ամրող ցուցակը համապատասխան տեղերի նշումով (տրվում է նաև բնագրի նմանահանությունը):

<sup>1</sup> Բ. Ա. Բոխով Ճ. Վ. Վրաց գրության նմուշներ (հնագրական ալբոմ, վրացերեն), Թրիլիսի, 1949, էջ 98—101 (նմուշներ) և էջ 304—305 (տեղեկութ.):

<sup>2</sup> Կ. Կեկելի Ճ. Վ. Վրաց գրականության պատմություն, հին մատենագրություն, համ. II, 2-րդ հրատարակություն (վրացերեն), Թրիլիսի, 1941, էջ 155:

<sup>3</sup> I. B. Thibaum. Нотные знаки в грузинских рукописях. „Христианский Восток“, т. III, вып. II, Петроград, 1915, стр. 207—212.

էջ, տող		աների վերջին վրացերեն բառերը	շարունակված հայերեն բառերը
1. 7,1 ( <i>ներքեցից</i> )			ՏՐՈՒՏ ՄԵ ՏՐՈՒՏՈՒԹԻՆ ՅՈՒ ՄԲ ԿԻՌՍ(կարմիր թանաքով)
2. 42,1	»	...լմրտօսա և մոտեցո	ԴՐԱԽ ԱՅ
3. 44,1	»	...գոզո թյալոնձաւ	ՄԵՇ ՈՂՈՐՄՈՒԹԻՆ
4. 47,20		...ցյարո	ՅՈՒ
5. 48,4		...շնօնքոման և ծալման	ԲՐԱԿԱՎԱՐԱԿՈՎ
6. 55,9		...լոտօսա և ընդպատ	ԲԱՆՏԱՅՑ
7. 55,11		...ագուցեցու	ՓԱՌԱԲԱՆՀԻՆ
8. 58,11			ՇՆՈՒՆԴ ՔՍԻ
9. 58,27		...յիւսնչյասա	ՅԱ ՔԱ ՏՐ ԱՅ
10. 60,1 ( <i>ներքեցից</i> )			ՏՐՈՒՏ ՊԱՐԵ
11. 76,1	»	...ծրիցոնցալոցասա	Դ
12. 86,7		...ցմառ Ց	ՆՈՐՈԳԵՑ
13. 160,1 ( <i>ներքեցից</i> )		...ցանասելո	ԿԱՐԱՊԵՏ
14. 187,1	»	...վոնամորհեց'օսասա	ԴՈՒՍՍԻՈԼԵՐԻՑ ԶԱՆՁՆ ՉՄԵՐ
15. 204,20		...ցանանատլնա և լուննո հոյեննո	
16. 204,25		...սոցլոսանո	ԶԱՇԽԱՐՀԻ
17. 206,1 ( <i>ներքեցից</i> )		...լո դա յացո և րուլո	ԱԾ ԵՒ ՄԱՐԴ
18. 228,19		...մահօամ ՄԱՐԴԱՄ	ՄԱՐԴԱՄ
19. 229,1	»	...նյոտո թյալոնձօսաւ	ՏՐ ՈՂՈՐՄԵ ՄԻՔԱՅԼԻ
20. 266,1	»	...նյոտո թյալոնձօսաւ	ԶԵԹ ՈՂՈՐՄՈՒԹԻՆ
21. 277,21		...թյալոնձաւ	ՈՂՈՐՄՈՒԹԻՆ
22. 283,15		...ցագուցեցո	ՓԱՌՔ
23. 284,13		...ցալոնձօտ ցագուցեցո	ՓԱՏՈ ՄԱԻՐ ՄՈՒՍԻՍ (կարմիր թնք.)
24. 362,1 ( <i>ներքեցից</i> )			ՅԱՐԵՒ ՔԱ
24ա. 367,1		ՅՈ օղացա...	
25. 470,17			ՏՐ ՈՂՈՐՄԵԱ
26. 472,1 ( <i>ներքեցից</i> )			ՏՐ ՊԱՀԵ Ի ԶԱՐԵ
27. 516,1	»		ՏՐ ՈՂՈՐՄԵ ՍՏԵՓՆԱ
28. 532,1	»		ՏՐ ՈՂՈՐՄԵ ՄԻՔՅԱՅԼԻ
29. 542,1	»	...թյոժուսհոյ	ԿՈՒԵՐՏԱԿԵՑԵՐ

Վարժ ձեռքով դրված սույն հայերեն հիշատակագրությունները նույն թարգով են, ինչոր բուն ձեռագրի տեքստը՝ կասկածից դուրս է այն, որ այդ հիշատակագրությունները պատկանում են նրանց, ովքեր ընդօրինակել են վրացերեն բնագիրը: Հետեւաբար, անվիճելիորեն, թե՛ վրացերեն տեքստը և թե՛ հայերեն հիշատակագրությունները դրված են միևնույն ժամանակ, այսինքն, ինչպես նշեցինք վերևում, 10-րդ դարի վերջին քառորդում:

Պարզ կարելի է հասկանալ, թե ինչ են ներկայացնում իրենցից հետևյալ հիշատակագրությունները՝ ՏՐ ՈՂՈՐՄԵ ՄԻՔԱՅԼԻ, ԱՄԷՆ (1), ՏՐ ՊԱՀԵ Ի ԶԱՐԵ (10), ՏՐ ՈՂՈՐՄԵ ՄԻՔԱՅԼԻ (19), ՏՐ ՈՂՈՐՄԵԱ (25), ՏՐ ՊԱՀԵ Ի ԶԱՐԵ (26), ՏՐ ՈՂՈՐՄԵ ՍՏԵՓՆԱ (27), ՏՐ ՈՂՈՐՄԵ ՄԻՔՅԱՅԼԻ (28): Զեռագիրն

1. ԺԻՌ ԱՂՋՄԱՆ : ՄԻՔԵՅԵԼ ԱԿՈՒՆ ՀՀ
2. ԱՆԴՐԵԱՆ ԵՎԱՆՈՎՅԱՆ : ԳՐԱՅԱԺ ԵՎ
3. ՀԱՅ ՐԱՊՈՒՄԱՅՏ : ՄԵԾ ՑՈՒՑԱՇՈՒԹԵՆ :
4. ՀԱՅՐԵՆԻ : Տ ՏՈՂ :
5. ԱՐՋՎՈՒՄՈՒՄ ԵՎԵԱՆՈՒՄ : ՄԵՐ ԿԻՌՈՒՄ :
6. ԱՆԴՐԵ ԵՎԱՆՈՎՅԱՆ : ԲԱՐԵՄ ԵՎ
7. ԱՅԱՀԱՅՑ : ՓԱՌԱՎԱԿԱՆԵՐՈՒՄ :
8. ԾՆՈՒՆԴԻ ՔՄԻ :
9. ԴԱԽԱՎՈՐԻ : ՖԱՔՈՒ ՄԻՌԱՅ :
10. ՄԵՐ ՊԱՐԵԽԱՎԱՐՄ :
  
11. ԱՆԴՐԵ ՀԱՅՐԵՆՈՎՈՂՅԱՆ : ԲԻՇԱՐԱՎԱՎԱՅՍՈՒ :
12. ԿՈՇ ՎԵ : Գ. Ի.
13. ՎԵՐԱՎՐՈՒՄ : Կ. ՆՈՐՈԳԵՐԵՆ :
14. ԿԻՆՐԱՎՈՒՅՆ :
  
15. ՀԱՅԻՆԻՆՈՎՈՒՅՆ : ԽԱՎՈՅԻ ԽԱՎՈՅԻՆ : ՊՈՒՍՎԱՌԵՐԵՅ : ԶԵՆԴԻՆ ԶՄԵՐ :
16. ԽԱՐԱԿԱԽԵՐԵՆ : ԶԱՅԻԽԵՐԵՆ :
17. ԱՌ ՀԱՅ ԿԵՐ : ԽԱՎՈՅԻ : ԱՐ : ԵՎ : ՄՎՐԴ :
18. ՆԵՐԻՆՈՅ : ԻՆՐԻՆ : ՄՎԱՐԻՆ :
19. ԺԻՌ ԱՂՋՄԱՆ : ՄԻՔԵՅԵԼ :
20. ՆԳՈՅ ՐԱՊՈՒՄԱՅՏ : ՔԱՌԵ ԱՂՋՄԱՆ ԱՐԵԲԵՆ :

ընդօրինակող դրիչներից մեկը, որ Միքայել Մողրեկիլու հետ միասին հիշվում է վերը բերված հիշատակագրությունների մեջ, ոլետք է լինի Ստեփանը. այս երկու գրիչները, ինչպես տեսնում ենք, աղերսում են աստծուն ողորմել իրենց և դերձ պահել շարից, մի բան որ ընդհանրապես սովորական է միջնադարյան բոլոր գրիչների համար:

Մեր կարծիքով ձեռագրի գրիչներից մեկն է նաև 24-րդ հիշատակագրության մեջ հիշված ՄՈՒՍԻՄ-ը:

8-րդ հիշատակագրությունը ՄԵՐԻՆԴ ՔՄԻ նշում է այն տոնը, որին նվիրված է օրհներդի ամբողջ տեքստը:

21. ընդօռացած Հ. Ողջություն :

22. Դ. Հանձնվում Փառակ

23. Դաշտացոյ Դրաշնչույթում Փառակ Մասնիք :

24. ՃՌՈՒՍԵՍ :

25. ՃՌՈՊՐԻՄԵԿ :

26. ՃՌ ՊԱՎՈ ԻՆՎԱՅ :

27. ՃՌ ՈՂՋՄԻ: ՍՄԻ: Փ' ԵՎ :

28. ՃՌ ՈղջՄԵ ԺԻՔՑԻ:

29. ՖԼԱՆԴՐԱԳԻՆ : ԽՈՒԵՐՎԱԿԵՑԵՐ :

11-րդ հիշատակագրությունը՝ ԲԲԾԿԵԽՎԱԼԵԽՍԱ ներկայացնում է Համապատասխան տողի վրա նրանից առաջ գտնվող վրացերեն բնագրի վերջին բառի (ՃՌԾՅՈՆՅԱԼՅԵԽ) տրանսլիտերացիան:

Մնացած 19 հիշատակագրությունները, վերջինիս նման, ներկայացնում են իրենցից առաջ գտնվող վրաց բնագրի վերջին բառերի վերաբարեպատճեցմանը (ՃՌԾՅՈՆՅԱԼՅԵԽ) տրանսլիտերացիայի ձևով, այլ գրեթե Հայերեն ճշգրիտ թարգմանությամբ:

Ինչպես տեսնում ենք, այդ հիշատակագրությունները որևէ անմիջական կապ չունեն վրաց օրհներգերի ժողովածուի բուն տերսակի հետ: Գրիշների կողմից դրանք ներկայացված են միմիայն այն նպատակով, որպեսզի ցույց տան, թե բացի վրացերենից, իրենք աեղյակ են և նաև օտար զբության: Տառարջեթում 10-րդ դարում գործող վրաց դպիրների Համար օտար լեզուներից տուաշին Հերթին մտաշելի էր Հայերենը և ապա Հունարենը: Ի միջի այլոց այդ ուարդ կերպով երևում է նաև մեր բերած հիշատակագրություններից, որոնցից մի քանիսի կողրին դետեղված են Հունարեն Համապատասխան բառեր: Վրաց դպիրների Հայերեն պրշության իմացությանը մեծ շափով նպաստում էր այն Հանդամանքը, որ ինչպես առաջ, նույնպես և այդ ժամանակ նրանց միջավայրում կավանաբանութեան Հաղորդակից Հայեր, որոնք հատկապես իրենց մայր Հայրենիքում դորժունեաթյան ասպարեզը կորցնելուց հետո (դավանարանական Հողի վրա): Հետզհետե կորցնում էին իրենց մայրենի լեզվի, առաջին Հերթին ժամանակի գրական լեզվի, իմացությունը և ձուլվում վրացիների հետ:

Մոտիկ ծանոթությունը ժողովածուի Հայերեն հիշատակագրությունների լեզվին, անկատեած, վկայում է այն մասին, որ նրանց գրանցողները տիրապետում են Հայերենին, Հնարավորություն ունեն իրենց միտքն արտահայտել Հայերեն լեզվով, ինչպես նաև թարգմանել ընդորինակող վրաց բնագրի բառերը, երկու գեալքում էլ Հայկական լավ զրշությամբ: Զնայած այս բոլորին, նրանց կողմից մեջ բերված Հայերեն բառերի ու խոսքերի ձևերը բնորոշ չեն այն ժամանակվա Հայերեն գրական լեզվի Համար: Հիշատակագրությունների լեզուն օժտված է ավելի կենդանի խոսակցական Հայերեն լեզվի հատկություններով, բայ թե ժամանակի գրական լեզվի: Նրանց շեղումները Հայերեն գրական լեզվի

քերականական նորմաներից բացահայտում են բարբառի որոշ նշաններ թև՝ ձեսրանության և թև՝ հնչյունաբանության տեսակետից: Քանի որ այդ հիշատակագրությունները զբարել են Տառ-Կլարչեթում, հետեւարար զբանց մեջ նկատվող բարբառային երեսությունները կարելի է ընդունել 10-րդ դարի Տայքի հայերեն լեզվի-բարբառի համար իրրեւ բնորոշ հատկություն:

Անընդ բերված հիշատակագրությունների մեջ Տայքի հայերեն բարբառին բնորոշ հնչյունաբանական նշանները հետևյալներն են.

#### 1. Առող ձայնավորների վերածվելը Երկրարբառի:

Այ ձայնավորը բառամիջում ՞ բաղաձայնից առաջ վերածված է երկրարբառի: Այսպիս՝ իրրեւ անվանկարար տարր մեկ դեպքում Ո ձայնավորից հետո ավելացվում է է, իսկ մյուս դեպքում այն դառնում է ու և հետո նյունական ավելացվում է է: Առաջին և երկրորդ դեպքերի համար ունենք միայն մեկական օրինակներ (15 և 29)՝ զուսաւորելց ← լուսաւորեաց. խումբտակելցեր ← խորտակեցեր: Նման երեսությունները այսօր ել գոյություն ունեն նաև վանի, Ուրմիայի և Մարաղայի հայերեն բարբառների մեջ<sup>1</sup>:

#### 2. Առող Երկրարբառների վերածվելը ձայնավորի:

Ոչ երկրարբառը փակ վանկում վերածված է ո ձայնավորի: Այս դեպքի համար մեր ձեռքի տակ ունենք միայն մեկ օրինակ (5), այն է՝ կիոս ← կոյս: Այստեղ նկատվում է հնչյունաբանական մեկ այլ երեսություն, որի մասին կխոսվի ստորև:

Իւ երկրարբառը փակ վանկում պատահում է իրրեւ ի ձայնավոր: Սրա համար էլ ունենք մեկ օրինակ (21)՝ ողորմութինն ← ողորմութինն: Այս երեսությը շատ է տարածված Երեանի և Ղարաբաղի արդի հայերեն բարբառներում<sup>2</sup>:

Եա երկրարբառը, որ ներկայացված է է, կամ ե ձայնավորով, օտար չէ նաև արդի հայերեն մի շարք բարբառների համար<sup>3</sup>: Այս երեսութին օրինակները բաց վանկում հետեւյալներն են՝ ողորմէ (1, 19, 27, 28) և պահե/է (10, 26) ← ողորմեա, պահեա (Հրամայական հղանակի 2-րդ դեմք), իսկ փակում՝ նորողեց 13), զուսաւորելց (15) և ողորմութին (20) ← նորողեաց, լուսաւորեաց (անցյալ կտտարյալ 3-րդ դեմք) և ողորմութեան (սեռական հոլով): Հրամայական հղանակի 2-րդ դեմքի ձեր (ներգործուկան կերպի բայերի համար) վերը նշված ձեռվեա նաև միջին հայերենում<sup>4</sup>: Անցյալ կատարյալի 3-րդ դեմքի վերը նշված ձեր նույնական սովորական է միջին և նոր հայերենի համար: Միջին հայերենին օտար չէ նաև -իւն-ով վերջացող անունների սեռական հոլովի -են/էն վերջավորությունը<sup>5</sup>:

#### 3. Առող ձայնեղ բաղաձայնների խլացումը:

Դ ձայնեղ բաղաձայնը մեկ դեպքում (6) բառի վերջում վերածված է ո խուլ բաղաձայնի՝ բանտ (Ա.լ) ← բանդ (Ա.լ):

#### 4. Ետնալեզվային բաղաձայնի հմայնացումը:

Ե-ի քմայնացման մեկ օրինակ ունենք (5)՝ կիոս ← կոյս: Ետնալեզվային եռյակ բաղաձայնների (դ, կ, ք) քմայնացումը արդի հայերեն բարբառների հա-

<sup>1</sup> Ա. Բ. Դարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 116—117:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 119:

<sup>3</sup> Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, 2-րդ մաս, Մոսկվա—Երևանի հետական, 1911, էջ 16:

<sup>4</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 249:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 250:

մար էլ հազվագյուտ չէ: Այս երեսութին հանդիպում ենք վանի, Ռումիայից Ղարաբաղի և այլ բարբառներում<sup>1</sup>:

5. Ենշտագրությամբ պետք է բացատրել ա-ի սղումը սեռական հոլովում, ձեռադրում պահպանված հետեւյալ հատուկ անվան մեջ՝ Ստեփինա և Ստեփինայ: Ենշտը այստեղ (27) երևի դրված է վերջից 3-րդ վանկի վրա:

6. Բացի վերոհիշյալ այն դեպքերից, որոնք վերաբերում են զուտ ձեարանուրյանը (հրամայական եղանակի 2-րդ դեմքի, անցյալ կատարյալի 3-րդ դեմքի և -ին վերջավորություն ունեցող անունների սեռական հոլովի ձևերին), հիշատակադրությունների մեջ մեկ դեպքում (23) ներկա ժամանակի առաջին դեմքի սպասելի մեջ վերջավորության փոխարեն ունենք -նից տանիք՝ տամմ (նկատենք նաև, որ բոլորազրով գրված այս բառի ն տառը գրված է վրացերեն բոլորազրով): Այս ձեւի նման փոփոխություն հանդիպում ենք դեռևս միջին հայերենում<sup>2</sup>, որը սովորական է արդի հայերենի համար:

Ինչպես տեսնում ենք, հայերեն գրական լեզուն լավ շտիրապետելու հետևանքով, 10-րդ դարի վրացերեն ժողովածուի գրիշների հիշատակագրությունների մեջ նկատվող լեզվական երեսությունները կրում են բարբառացին բնույթ: Այն հանդամանքը, որ ձեռագրի գրիշները թերավարժ են եղել հայկական դրաբարության մեջ, մեզ հնարավորություն ընձեռեց բացահայտել իրենց ժամանակի Տայքի հայերեն կենդանի խոսակցական լեզվի՝ Տայքի բարբառի մի քանի բնորոշ կողմերը:

Վրաց դպիրների կողմից գրած հիշյալ հիշատակագրությունների մեջ, ինչպես սպասելի էր, նկատվում են վրաց լեզվի ազգեցության հետքերը: Ե և է տառերը գործածված են մեկը մյուսի փոխարեն (պահե ի շարի և պահէ ի շարէ ողորմէա և ողորմեա, այնպես ինչպես այդ տեղի է ունեցել վրաց գրականության մեջ 10-րդ դարում: Այսպես նաև Հնչյունը մի դեպքում ներկայացված է ու-ով (զուաւելերեց), իսկ մյուս դեպքում լ-ով (բբծկինվալեսա, վրացերենում կա միայն մեկ տեսակի Յ), կամ էլ վ-ի տեղ ւ-ի գործածություն (Մուսէս և Մովսէս), և վերջապես մեկ դեպքում «տանք» բայի գրչության մեջ հայկական ն-ի տեղ վրացերեն նուսխա-խուցութի ն-ի սպրդումը հաստատում է այն, որ ընդօրինակողների համար հարազատ է եղել վրաց լեզուն ու դպրությունը, իսկ հայերենը, որով նրանք տեղ-տեղ կատարել են հիշատակագրություններ նրանց համար եղել է ոչ հարազատ, բայց միաժամանակ գործնականորեն (իբրև խոսակցական լեզու) հասկանալի ու գործածական:

Տառ-Կլարչեթում 10-րդ դարի 70-ական թվականներին ընդօրինակված մի ձեռագիր էլ, որ վրաց բանասիրության մեջ հայտնի է Շատրերդի ժողովածու (Տ—1141) անունով, ունի ժողովածուի գրչի՝ Խոանէ Բերայի ձեռքով գրանցված մի քանի հայերեն հիշատակագրություններ: Այդ հիշատակագրությունների ֆոտո-պատճենները կցելով ժողովածուի մեջ զետեղված «Երդ երգոցի» Հիսողիտոսի մեկնությանը՝ հրատարակել է ակադեմիկոս Ն. Մառը (ՏՐ, հիմնական լուսական համար 1951, էջ 243):

Միքայել Մողբեկիլու երդարանի մեջ տեղ դրած հայերեն հիշատակագրություններում տեղի ունեցած վերը հիշված բարբառացին երեսությունները որոշ

<sup>1</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց լեզվի պատմության, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 243:

<sup>2</sup> Ա. Բ. Դ ա բ ի բ յ ա ն, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 133, նաև

Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 250:

շափով կրկնվում են նաև իունի թերայի հիշատակագրությունների մեջ: Այսպիսս, օրինակ՝

### 1. Որոշ երկարաբանների վերածվելը ձայնավորի:

Թերան մի տեղ գրում է «Ած որհնէ թերայն գրադիրս, ամին»: Այստեղ «որհնէ» դրել է սպասելի «աւորհնեա» ձեր փոխարևուն: Եա երկրաբառը վերածված է և ձայնավորի, այնպես ինչպես այդ մենք տեսանք երգարանի հիշատակագրությունների մեջ (պահենէ, ողորմէ — պահեա, ողորմեա): Թերան, ինչպես և երգարանի գրիշը, զիտե հիշված բայերի հրամայական եղանակի երկրորդ դիմքի նաև գրական ձևերը: Օրինակ՝ Միքայելի մոտ «ողորմէա» (25), իսկ թերայի մոտ «ուղնիս» ← աւգնիս: Թերայի կողմից եա երկրաբառի այսպիսի դործածությունը վկայում է այն մասին, որ 10-րդ դարի 70-ական թվականներին այդ երկրաբառի արտասանությունը եղել է իա ձևով:

Վերը բերված օրինակներով հաստատվում է նաև այն, որ աւ երկրաբառը 10-րդ դարում արտասանվել է իրու ո, այսինքն աւ-ը վերածվել է ո ձայնավորի:

### 2. Որոշ ձայնեղ բաղաձայնների խլացումը:

Իրու հիշատակագրություն բերված «Հայր մեր» աղոթքի հայկական տերսուի սկզբներում հիշվող «սուրբ» բառը թերան գրել է «սորի» ձևով, այսինքն վերջին ձայնեղ թ-ն ներկայացված է իրու շնչեղ-խուլ վի: Ուրեմն ձայնեղ բաղաձայնը նրա մոտ որոշ դեպքերում խլացած է, մի բան, որ մենք տեսանք նաև երգարանի հիշատակագրությունների մեջ՝ բանտ ← բանդ:

Ի տարրերություն Մողրեկիլու ժողովածուի հայերեն հիշատակագրությունների, թերայի մոտ մենք հանդիպում ենք հնչյունաբանական այլ երևույթների ևս: Այսպես, շեշտ ունեցող ե-ն ներկայացված է ին ձևով, օրինակ՝ «Հայր մեր»-ի փոխարեն «Հայր միեր»: Նման երևույթ նկատվում է նաև հայերենի ժամանակակից բարբառների մեջ, ինչպես, օրինակ՝ վանի, Ուրմիայի և Նոր Բայազետի բարբառներում<sup>1</sup>:

Թերայի հիշատակագրություններում վրաց գրական լեզվի աղղեցության հետքերն ավելի են նկատելի, քան թե երգարանի հիշատակագրություններում: Օրինակ՝ ու և բ տառերը վրացերենի աղղեցությամբ գրված են միայն փափուկ բ-ով (արթէ — առնէ) և «ամին» փոխարեն «ամէն»-ի: Այս կապակցությամբ շիկարելի շհիշել Ն. Մատի զնահատականը թերայի վերաբերյալ «Но познания этого грузина в книжном армянском, не смотря на его умение каллиграфически выводить армянские буквы, были, очевидно, весьма слабы»<sup>2</sup>: եվ իրոք, երբ մենք համեմատում ենք երգարանի հիշատակագրությունների լեզուն թերայի հիշատակագրությունների լեզվի հետ, պարզ կերպով տեսնում ենք, որ թերայի գիտելիքները ժամանակի հայերեն գրական լեզվի բնագավառում անհամեմատ թույլ են:

Ահա թե ինչպիսի արժեքավոր նոր տվյալներ են հաղորդում մեզ վերը հիշված 10-րդ դարի վրացերեն ձեռագրերի հայերեն հիշատակագրությունները հայերեն լեզվի Տայքի բարբառի որոշ առանձնահատկությունների մասին: Այսպիսս, օրինակ՝

<sup>1</sup> Ա. Բ. Դարիքյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 110:

<sup>2</sup> Н. Марр, Исполит, Толкование Песни-Песней. „Тексты и разыскания по армяно-грузинской филологии“, книга III, СПБ, 1901, էջ XX.

ողես ուրիմն, հնում Հայերին բարբառների գոյությունը մեր կարծիքով պետք է համարել անվիճելի:

Հայտնի է, որ 8-րդ դարի Հայ ականավոր հեղինակ Ստեփանոս Սյունեցին տեղեկություն է հաղորդում այն մասին, որ Հայաստանի սահմանակից շրջաններում, այդ թվում նաև Տայքում, գոյություն են ունեցել տեղական խոսվածքներ։ Մեր կարծիքով՝ Միքայել Մողբեկիլու և Բերայի հիշատակությունների բարբառային առանձնահատկությունները լրացուցիչ հնարավորություն են տալիս Սյունեցու տվյալը մեկնելու ոչ այն առումով, որ նա ակնարկել է տեղական բնիկների հին լեզուների մասին, ինչպես կարծել են որոշ Հայ և օտարազգի հայագետներ<sup>1</sup>, այլ ժամանակի Հայ լեզվի բարբառների մասին։

<sup>1</sup> Տե՛ս այդ մասին Հ. Ա. Շահոյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 128—133։